ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ «ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԵՐԻ ԱԳՐՈՔԻՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՐՐԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N 23-26

ք. Երևան 26 01 2026 թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Հայկազ Նասիբյան), ով գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը** (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս տնօրեն Գառնիկ Հովհաննիսյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով 2025 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-397-Ն օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ 1059 «Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն» 2026 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում իրականացվող 11001 «Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման» միջոցառումների իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշման 1059. «Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն» ծրագրի 11001. «Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում» միջոցառմամբ նախատեսված՝ 47,940,000 (քառասունյոթ միլիոն ինը հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N 1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակել դրամաշնորհի հատկացման պայմանագիր կնքած կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը.

2.3.2. պաշտոնական կայք էջում հրապարակել կազմակերպության կողմից տրամադրված հաշվետվությունը, ընդունելուց հետո 3-օրյա ժամկետում, բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

2.3.3. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.4. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.5. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.6. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

2.3.7. եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. վարել առանձնացված հաշվառում պետական բյուջեի միջոցների հաշվին վճարված ծառայությունների ողջ ծավալի գծով ձևավորված ավելացված արժեքի հարկի մասով և ավելացված արժեքի հարկի վճարման անդորրագրերը ներկայացնել պետական մարմին

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.4. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.5. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 Հ-8 և տեքստային) եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվություններ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ դրամաշնորհային հաշվետվություն՝ համաձայն N 2 հավելվածի:

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա դեկտեմբերի 22-ը:

2.4.10. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքներն ընդունվելուց հետո առաջացած տնտեսումները (խնայողությունները) կազմակերպությունը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

2.4.11. Սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարում ներառված ավելացված արժեքի հարկի գծով հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2026 թվականին ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ՝ հանձնաժողովի կողմից ներկայացված դրական եզրակացության հիման վրա:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և

կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.5 Հանձնման-ընդունման ակտը ընդունված է համարվում երկկողմ ստորագրման և համակարգող նախարարի տեղակալի կողմից ստորագրության առկայության դեպքում,

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդող ամսվա 5-ը ներկայացված ծախսերի կատարման հայտի, (հաշվարկ-բացատրագրի՝ հավելված N 7)՝ համապատասխան Ծրագրի ծախսերի նախահաշվի (հավելված N 6), և հանձնման-ընդունման (հավելված N 4) ակտի, ինչպես նաև համապատասխան հանձնաժողովի կողմից ներկայացված դրական եզրակացության (հավելված N 8) հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի NN 1 և 5 հավելվածներում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային

օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագրի ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ https://mineconomy.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.3. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում

հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.4. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.5. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակով՝ 16 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն **Հասցե՝** **0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5** **Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն** **Հ/Հ 9000110032167** **ՀՎՀՀ 02698604**	**«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ** **Հասցե՝** **0041, ք. Երևան, Էրեբունի 12/6** **ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն** **Հ/Հ 900018003872** **ՀՎՀՀ 01805817**
Գլխավոր քարտուղար՝	**Տնօրեն՝**
ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ	**ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
26.01. 2026 թ. -ին
կնքված N23-26 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	«Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում:»	Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման և ագրոքիմիական քարտեզների և պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմման նպատակով դաշտային հետազոտությունների իրականացում	Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման և ագրոքիմիական քարտեզների և պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմման նպատակով դաշտային հետազոտությունների իրականացում:	1) Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում բուսասանիտարական վիճակի բարելավում: 2) Գյուղատնտեսական մշակաբույսերի որակով բերքի ապահովում և ըստ այդմ գյուղական բնակչության եկամուտների ավելացում: 3) Հողերի ապահովվածություն՝ մատչելի սննդանյութերով և մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հետազոտված և հիմնավորված համակարգի առկայություն: 4) Մշակովի հողերի համար ագրոքիմիական քարտեզների առկայություն: 5) Հողի բերրիության բարելավման համար պարարտացման չափաբաժինների առկայություն: 6) Պարարտանյութերի օգտագործման ագրոտեխնիկական ցուցումների առկայություն: 180000 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածության վրա կատարվելու է մոնիթորինգ, որից շուրջ 90000 հա մկնանման կրծողների և 60000 մորեխների, 5 000 հա հացահատիկային փոշեմրրիկի և ժանգի համար, պտղատուների՝ 15 000 հա, բանջարաբոստանային կուլտուրաների՝ 5000 հա և խաղողի այգիների՝ 5000 հա: Ուսումնասիրվելու են Հայաստանի Հանրապետության 10 մարզերի թվով 85 համայնքների գյուղատնտեսական նշանակության հողեր՝ շուրջ 44 000 հա, կատարվելու են հողանմուշների շուրջ 39400 հատ լաբորատոր փորձաքննություններ:Ուսումնասիրվելու են բերրիության գործոնիները՝ ազոտի, ֆոսֆորի և կալիումի	12/30/2026	Հաշվետվությունը ներկայացվում է Պայմանագրի 4-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում:	47,940.00
						ԸՆԴԱՄԵՆԸ	47,940.00

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 9000110032167
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝
ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ

Կազմակերպություն

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0041, ք. Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 9000180038725817
ՀՎՀՀ 01805817

Տնօրեն՝
ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված 2
26-01 2026 թ. -ին
կնքված N 23-26 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ)

Ծրագրի անվանում	**«Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն»**
Դրամաշնորհի համար	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

2.3 Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.4 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.5 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.6 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են, որոնք օժանդակել են նաև ծրագրի նպատակին հասնելուն:

Հավելված 3
2026 թ.-ին
կնքված N պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ հազ. դրամ (առողջական)

Միջոցառման														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
		Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում	3,926.40	3,926.40	3,926.40	11,527.40	11,527.40	11,527.40	34,611.70	34,611.70	34,611.70	47,940.00	47,940.00	47,940.00

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 9000110032167
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՆԱՍԻՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0041, ք. Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817

Տնօրեն՝
ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 4
26.01. 2026 թ.-ին կնքված
N23 26 պայմանագրի

ՀԱՍՏԱՏԵՑ
Համակարգող փոխնախարար

_____
Կ.Տ'

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
Հ/Հ 9000110032167
ՀՎՀՀ 02698604

_____

Կազմակերպություն

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0041, ք. Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817

ԱԿՏ №

ՊԱՅՄԱՆԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2026 թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » «հունվար» 2026 թ.
Պայմանագրի համարը՝
Պետական մարմինը և Կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված № _ _ _ _ _ հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանգրի շրջանակներում Կազմակերպությունը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

Իրականացված միջոցառման							
		արդյունքը		կատարման ժամկետը		վճարման ենթակա գումարը (հազ. ՀՀ դրամ)	վճարման ժամեկտը (ըստ պայմանագրի)
անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 9000110032167
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝
ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ

_____

Կազմակերպություն

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0041, ք. Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817

Տնօրեն
ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

_____
Կ.Տ.

Հավելված 5
26.01. 2026 թ. -ին
կնքված N պայմանագրի
23-26

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ էկոնոմիկայի նախարարություն***

Կազմակերպության անվանումը՝ ***«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն***

Ծրագրի անվանումը՝ ***«Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն»***

Ծրագրի համառոտ նկարագրություն	Միջոցառման ցուցանիշի անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի ընթացքում (աճողական)			
		I եռամսյակ	I կիսամյակ	ինը ամիս	տարի
		քանակը	քանակը	քանակը	քանակը
1	2	3	4	5	6
Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման և ագրոքիմիական քարտեզների և պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմման նպատակով դաշտային հետազոտությունների իրականացում	Վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով հետազոտված տարածքներ, հա		85500		180000
	Հետազոտվող տարածքից վերցված հողանմուշի լաբորատոր փորձաքննություններ, քանակ շուրջ		12000		39400
	Ճշտված ագրոքիմիական քարտեզներ տրամադրված բնակավայրերի տեսակարար կշիռը բնակավայրերի ընդհանուր թվում, տոկոս				20
	Գյուղատնտեսական նշանակության հողերի կազմված ագրոքիմիական քարտեզներ և համայնքներին տրամադրված պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրեր, հատ		20		85
	Կայուն բուսասանիտարական իրավիճակի ապահովում, տոկոս		90.0		90

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 9000110032167
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝
ՀԱՅԿԱՀ ՆԱՍԻԲՅԱՆ
Կ.Տ.

Կազմակերպություն

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0041, ք. Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817

Տնօրեն՝
ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Կ.Տ.

Հավելված 6
26.01 2026 թ. -ին
կնքված N պայմանագրի
23-26

ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

NN	Ծրագրի գծով իրականացվող ծախսերը (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)	Գումարը /հազ. դրամ/			
	Անվանումները	1-ին եռամսյակ	կիսամյակ	9 ամիս	Տարի
Ա	Բ				
1	**1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ**	**3272.0**	***9606.2***	**28843.1**	**39950.0**
	1.1 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ				0.0
	1.2 Այլ վարձատրություններ	3272.0	9606.2	28843.1	39950.0
	2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ այդ թվում՝	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**
	2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	0.0	0.0	0.0	0.0
	- Մասնագիտական ծառայություններ	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**
	7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	654.4	1921.2	5768.6	7990.0
	7.2. Հարկեր, պարտադիր վճարներ և տուժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ	***654.4***	***1921.2***	***5768.6***	***7990.0***
	- ԱԱՀ-ի գծով	654.4	1921.2	5768.6	7990.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**3926.4**	**11527.4**	**34611.7**	**47940.0**

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի
նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 9000110032167
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝
ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ
Կ.Տ.

Կազմակերպություն

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0041, ք. Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817

Տնօրեն՝
ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Կ.Տ.

Հավելված N 7
2026 թվականի 01 26 կնքված
N 23-26 պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀԱՅՏ N

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Կազմակերպության անվանումը

ՀԱԾՎԻ ՀԱՄԱՐԸ

Բաժին 04 խումբ 02 Դաս 01 Ծրագիր 04
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

2026 թ.
ԱՄՍԱԹԻՎ

1059 «Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն»
(ծրագրի անվանումը)

Հ/Հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՈԴՎԱԾ	ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Առաջին կարգի
ստորագրություն՝

Երկրորդ կարգի
ստորագրություն՝

Ծանուցում՝ Սույն հայտը ուժի մեջ է պահանջվող ֆինանսավորման, սույն պայմանագրի N6 հավելվածով հաստատված ծրագրի կատարման ծախսերի նախահաշվին համապատասխան տրված հաշվարկ-բացատրագրի առկայության դեպքում

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի
նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 9000110032167
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար՝
ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0041, ք. Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817
Տնօրեն՝
ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 8
26-01 2026 թ. -ին
կնքված N23-26 պայմանագրի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N

ՊԱՅՄԱՆԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«_

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____»«_____» 2026թ.

Պայմանագրի համարը

Պատվիրատուի անվանումը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն

Պայմանագրի կողմի անվանումը «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները

N	Իրականացված միջոցառման					
	անվանումը	Նկարագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը	
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

_____
_____
_____
_____

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն:
(դրական/բացասական)

Հանձնաժողովի նախագահ՝ _____
անուն-ազգանուն, ստորագրություն «____»«_____» 2026 թ.

անդամներ՝ _____
անուն-ազգանուն, ստորագրություն «____»«_____» 2026 թ.